ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1346-27.04.2026-ԱՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ
«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դիվանագիտական ծառայության մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-249 օրենքը (այսուհետ՝ օրենք) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են դիվանագիտական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու կարգերը, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց կարգավիճակը, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների իրավունքները, սոցիալական երաշխիքները, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքները,

ինչպես նաև կարգավորվում են դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, պաշտոնների դասակարգման և համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, կարգավիճակի, պաշտոնից ազատման և ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: Դիվանագիտական ծառայության, ինչպես նաև արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է դիվանագիտական ծառայության մարմինների և դրանցում դիվանագիտական պաշտոններ և դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

2. Օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում օտարերկրյա քաղաքացիների կամ այդ պետության մշտական բնակության իրավունք ունեցող՝ քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով նաև տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև այդ պետության հետ կնքված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համապատասխան պահանջները:

3. Օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմի պաշտոնների անվանացանկը և դրույքաչափը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 3. Դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությունը

1. Դիվանագիտական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Հոդված 4. Դիվանագիտական ծառայության խնդիրները

1. Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:

Հոդված 5. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **դիվանագետ՝** դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոն կամ դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձ.

2) **դիվանագիտական ծառայություն՝** մասնագիտական գործունեություն, որը դիվանագիտական ծառայության մարմիններում իրականացնում են դիվանագետները սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով.

3) **օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավար՝** արտակարգ և լիազոր դեսպան, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցիչ (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցիչներ), գլխավոր հյուպատոս, գործերի հավատարմատար.

4) **դիվանագիտական աստիճան՝** հատուկ դասային աստիճան, որը դիվանագետին շնորհվում է դիվանագիտական ծառայության անցնելիս և ծառայության ընթացքում.

5) **ռոտացիա՝** արտաքին գործերի նախարարությունում կամ արտաքին գործերի նախարարությանը ենթակա մարմնում (այսուհետ՝ ենթակա մարմին) և օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական

ծառայության հավասարազոր պաշտոններում իրար հաջորդող աշխատանքային փուլերով պաշտոնավարություն.

6) **դիվանագետի ընտանիքի անդամ՝** ամուսին և մինչև 18 տարեկան երեխա:

Հոդված 6. Դիվանագիտական ծառայության մարմինները

1. Դիվանագիտական ծառայության մարմիններն են՝

1) արտաքին գործերի նախարարությունը.

2) արտաքին գործերի նախարարությանը ենթակա մարմինը.

3) արտաքին գործերի նախարարությանը ենթակա՝ օտարերկրյա պետություններում գործող կառուցվածքային ստորաբաժանումները (այսուհետ՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին)՝

ա. դեսպանությունները.

բ. միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչությունները (այսուհետ՝ մշտական ներկայացուցչություն).

գ. հյուպատոսական հիմնարկները:

2. Օտարերկրյա պետության հետ ձեռք բերված համաձայնությամբ՝ օտարերկրյա պետությունում հավատարմագրված դեսպանի ընդհանուր ղեկավարությամբ կարող է գործել դիվանագիտական գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ):

3. Սույն հոդվածում նշված դիվանագիտական ծառայության մարմինները կազմում են արտաքին գործերի նախարարության համակարգը:

Գ Լ ՈՒ Խ 2

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7. Արտաքին գործերի նախարարությունը

1. Արտաքին գործերի նախարարությունը պետական կառավարման համակարգի լիազոր մարմին է, որը մշակում և իրականացնում է Կառավարության արտաքին քաղաքականությունը՝ սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Հոդված 8. Արտաքին գործերի նախարարության ղեկավարումը

1. Արտաքին գործերի նախարարությունը ղեկավարում է արտաքին գործերի նախարարը:

2. Արտաքին գործերի նախարարի հրամանով արտաքին քաղաքականության առանձին բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմնի գործունեության համակարգումը կարող է վերապահվել նախարարին, ինչպես նաև նախարարի տեղակալներին:

3. Արտաքին գործերի նախարարի տեղակալը գործում է արտաքին գործերի նախարարի կողմից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքները իրեն հանձնարարված բնագավառներում:

4. Արտաքին գործերի նախարարի և տեղակալների լիազորությունները, ինչպես նաև դրանց իրականացման հետ առնչվող հարցերը սահմանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, սույն օրենքով և արտաքին գործերի նախարարության կանոնադրությամբ:

Հոդված 9. Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը

1. Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ գլխավոր քարտուղար) պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ պետական մարմնի գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:

2. Գլխավոր քարտուղարն ունի տեղակալ, որը քաղաքացիական ծառայող է:

Հոդված 10. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմինները

1. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմիններն իրականացնում են պաշտոնական հարաբերությունները հավատարմագրման պետության հետ և ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունն այդ պետությունում և (կամ) միջազգային կազմակերպությունում:

2. Մշտական ներկայացուցչությունն իրականացնում է պաշտոնական հարաբերություններ և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպությունում: Կախված միջազգային կազմակերպությունում

ընդունված կարգից՝ մշտական ներկայացուցչությունը կարող է ունենալ նաև այլ անվանում՝ առաքելություն, պատվիրակություն և այլն:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմինն իր գործունեությամբ ենթակա և հաշվետու են արտաքին գործերի նախարարին:

4. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի գործառույթները և գործունեության հետ կապված հարցերը սահմանվում են սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի կանոնադրությունը հաստատվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

5. Կառավարության որոշման հիման վրա օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնին կից կարող են գործել պաշտպանության հարցերով կցորդներ, ռազմական և առևտրական կցորդներ կամ ներկայացուցիչներ, մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ներկայացուցիչներ:

6. Պաշտպանության հարցերով կցորդները, ռազմական կցորդները և ներկայացուցիչները կարող են ունենալ տեղակալներ և օգնականներ:

7. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնին կից Կառավարության որոշմամբ կարող են գործել այլ կցորդներ և ներկայացուցիչներ՝ այդ պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

8. Սույն հոդվածում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և ներկայացուցիչների տեղակալների և օգնականների հաստիքները սահմանվում են վարչապետի որոշմամբ՝ իրավասու մարմնի ներկայացմամբ՝ համաձայնեցված արտաքին գործերի նախարարության հետ:

9. Սույն հոդվածում նշված կցորդները և ներկայացուցիչները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են վարչապետի որոշմամբ, իսկ պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և ներկայացուցիչների տեղակալները և օգնականները՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի հրամանով՝ համաձայնեցված արտաքին գործերի նախարարության հետ:

10. Սույն հոդվածում նշված կցորդները և ներկայացուցիչները գործում են օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ:

11. Սույն հոդվածում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և

ներկայացուցիչների տեղակալների և օգնականների պաշտոնի նշանակման և ազատման, ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ինչպես նաև կարգավիճակի, գործունեության և լիազորությունների շրջանակի, նրանց և նրանց ընտանիքների անդամների պահպանման ծախսերի ֆինանսավորման կարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կառավարության որոշմամբ:

Հոդված 11. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ստեղծումը և լուծարումը

1. Դեսպանությունն ստեղծվում է Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:
2. Դեսպանությունը կարող է լուծարվել Կառավարության որոշմամբ՝ տվյալ օտարերկրյա պետության հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հարաբերությունները խզելու, ինչպես նաև դեսպանության պահպանումը որևէ պատճառով նպատակահարմար չլինելու դեպքերում:
3. Մշտական ներկայացուցչությունն ստեղծվում և լուծարվում է Կառավարության որոշմամբ՝ տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ միջազգային կազմակերպությունում ընդունված կարգի համաձայն:
4. Հյուպատոսական հիմնարկը ստեղծվում և լուծարվում է Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածությամբ և պայմաններով:
5. Գրասենյակը ստեղծվում և լուծարվում է վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:
6. Դիվանագիտական ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով կարող են միաժամանակ հավատարմագրվել մեկից ավելի օտարերկրյա պետություններում և/կամ միջազգային կազմակերպություններում:
7. Դեսպանությունը և մշտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով անհրաժեշտության դեպքում կարող են որևէ օտարերկրյա պետության շահերը ներկայացնել այլ օտարերկրյա պետությունում կամ միջազգային կազմակերպությունում:

8. Օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետության հետ փոխադարձ համաձայնությամբ կարող է Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնել այլ օտարերկրյա պետությունում կամ միջազգային կազմակերպությունում՝ ընդունող պետության կամ միջազգային կազմակերպության հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:

Հոդված 12. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի գործառույթները

1. Դեսպանության գործառույթներն են՝

1) ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան օտարերկրյա պետությունում (այսուհետ՝ դեսպանընկալ պետություն) և ապահովել պաշտոնական հարաբերություններն այդ պետության հետ.

2) խրախուսել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության ու դեսպանընկալ պետության միջև բարեկամական հարաբերությունները և նպաստել փոխշահավետ կապերի զարգացմանը քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում.

3) պաշտպանել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը դեսպանընկալ պետությունում.

4) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.

5) նպաստել դեսպանընկալ պետության հետ կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.

6) վարել բանակցություններ դեսպանընկալ պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների հետ.

7) իրականացնել միջազգային իրավունքի նորմերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հյուպատոսական գործառույթներ.

8) օրինական միջոցներով հավաքել, մշակել ու Կառավարությանը տրամադրել տեղեկություններ դեսպանընկալ պետությունում տեղի ունեցող իրադարձությունների, քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին:

2. Մշտական ներկայացուցչության գործառույթներն են՝

1) ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան միջազգային կազմակերպությունում և ապահովել պաշտոնական հարաբերություններ միջազգային կազմակերպության հետ, ինչպես նաև այդ միջազգային կազմակերպություններում օտարերկրյա պետությունների մշտական ներկայացուցչությունների հետ.

2) պաշտպանել Հայաստանի Հանրապետության շահերը տվյալ միջազգային կազմակերպությունում.

3) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.

4) նպաստել միջազգային կազմակերպության հետ կամ դրա շրջանակներում կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.

5) վարել բանակցություններ միջազգային կազմակերպության հետ, ինչպես նաև այդ միջազգային կազմակերպությունում օտարերկրյա պետությունների մշտական ներկայացուցչությունների հետ.

6) օրինական միջոցներով հավաքել, մշակել և Կառավարությանը տրամադրել տեղեկություններ տվյալ միջազգային կազմակերպությունում տեղի ունեցող գործընթացների մասին:

3. Դեսպանությունը և մշտական ներկայացուցչությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) միջազգային պայմանագրերով իրենց վերապահված այլ գործառույթներ:

Հոդված 13. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարումը

1. Դեսպանության ղեկավար կարող է լինել արտակարգ և լիազոր դեսպանը կամ գործերի հավատարմատարը՝ տվյալ պետության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, իսկ միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցչության ղեկավար՝ մշտական ներկայացուցիչը:

2. Դիվանագիտական ներկայացուցիչները նշանակվում և հետ են կանչվում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Դիվանագիտական ներկայացուցիչները պաշտոնավարում են առավելագույնը 5 տարի ժամկետով: Պաշտոնավարման ժամկետի ավարտից անմիջապես հետո դիվանագիտական ներկայացուցիչները կարող են նշանակվել այլ պետությունում կամ միջազգային կազմակերպությունում դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում: Երկու իրար հաջորդող պաշտոնավարման ժամկետների ընդհանուր

հանրագումարը չի կարող գերազանցել 8 տարին: Դիվանագիտական ներկայացուցիչները կարող են հետ կանչվել սույն մասում նշված ժամկետից շուտ:

4. Դիվանագիտական ներկայացուցիչները նշանակումից հետո կարող են հրավիրվել Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով՝ հանդիպման կամ աշխատանքային քննարկման:

5. Դիվանագիտական ներկայացուցիչները ծառայության ընթացքում կարող են կանչվել խորհրդակցությունների առավելագույնը 6 ամիս ժամկետով: 1 ամսից ավելի ժամկետով խորհրդակցությունների կանչվելու դեպքում դիվանագիտական ներկայացուցիչներին չի տրամադրվում օտարերկրյա պետությունում ծառայության հետ կապված ծախսերի (տվյալ երկրի կենսամակարդակի հիման վրա տրամադրվող) փոխհատուցումը:

6. Գործերի հավատարմատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է արտաքին գործերի նախարարը:

7. Հյուպատոսական հիմնարկը ղեկավարում է գլխավոր հյուպատոսը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է արտաքին գործերի նախարարը:

8. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականություններն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի, իսկ անհնարինության դեպքում՝ արտաքին գործերի նախարարի հրամանով կատարում է տվյալ դիվանագիտական ծառայության մարմնի դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետներից մեկը՝ որպես գործերի ժամանակավոր հավատարմատար:

Հոդված 14. Դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը և հետ կանչը

1. Դիվանագիտական ներկայացուցչին նշանակում և հետ է կանչում Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

2. Վարչապետի առաջարկությանը կցվում է դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու կամ հետ կանչելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, նշանակման դեպքում՝ կից հավատարմագրով:

3. Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա

ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում Հանրապետության նախագահին վարչապետի ներկայացրած առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու կամ հետ կանչելու մասին՝ նշանակման դեպքում ստորագրելով հավատարմագիրը:

6. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա, Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն, դիվանագիտական ներկայացուցիչը նշանակված կամ հետ կանչված է համարվում իրավունքի ուժով սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետն անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում և ստորագրում է նշանակման հավատարմագիրը: Գրավոր հայտարարությունն ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

7. Դիվանագիտական ներկայացուցչին պաշտոնավարման ժամկետից շուտ հետ կանչելու ընթացակարգերի վրա տարածվում են սույն հոդվածի դրույթները:

Հոդված 15. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի՝ իր պարտականությունների կատարմանն անցնելու սկիզբը և ավարտը

1. Արտակարգ և լիազոր դեսպանն իր պարտականությունների կատարմանն է անցնում դեսպանընկալ պետության ղեկավարին այդ պաշտոնում իր նշանակվելու մասին հավատարմագիրը հանձնելուց կամ այդ պետության արտաքին գործերի գերատեսչության ղեկավարին իր նշանակվելու մասին հավատարմագրի պատճենը հանձնելուց հետո՝ դեսպանընկալ պետությունում ընդունված կարգի համաձայն:

2. Գործերի հավատարմատարն իր պարտականությունների կատարմանն է անցնում այդ պաշտոնում իր նշանակվելու մասին արտաքին գործերի նախարարի նամակը դեսպանընկալ պետության արտաքին գործերի գերատեսչության ղեկավարին հանձնելուց անմիջապես հետո կամ այդ պետությունում ընդունված կարգի համաձայն:

3. Միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցիչն իր պարտականությունների կատարմանն է անցնում միջազգային կազմակերպության

ղեկավարին (գլխավոր քարտուղարին) իր նշանակման մասին արտաքին գործերի նախարարի նամակը հանձնելուց հետո:

4. Դիվանագիտական ներկայացուցչի լիազորությունները դադարեցվում են Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ, հետևյալ դեպքերում.

1) գործառույթները կատարելու անհնարինության դեպքում.

2) միջազգային իրավունքով նախատեսված դեպքերում.

3) սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 7-րդ կետերում, ինչպես նաև 3-րդ մասի 1-7-րդ կետերում նշված դեպքերում:

5. Մինչև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելը դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցրած անձը պաշտոնավարության ավարտից հետո գրանցվում է դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում՝ դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում դիվանագետներին գրանցելու և ռեզերվից հանելու կարգին համապատասխան:

6. Մինչև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելը դիվանագիտական ծառայության պաշտոն չզբաղեցրած անձը պաշտոնավարության ավարտից հետո չի կարող նշանակվել արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական ծառայության պաշտոնի, բացառությամբ արտաքին գործերի նախարարի համապատասխան որոշման:

Հոդված 16. Հատուկ հանձնարարություններով դեսպանը և հատուկ առաքելությունները

1. Միջազգային հարաբերություններում որոշակի խնդիրներ լուծելու նպատակով վարչապետը կարող է նշանակել հատուկ հանձնարարություններով դեսպան, կամ Կառավարության որոշմամբ կարող են ստեղծվել հատուկ առաքելություններ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ինչպես դիվանագետներ, այնպես էլ այլ անձինք:

Հոդված 17. Հյուպատոսական հիմնարկի գործունեության կարգավորումը

1. Հյուպատոսական հիմնարկն իր գործունեությամբ ենթակա և հաշվետու է արտաքին գործերի նախարարությանը:

2. Հյուպատոսական հիմնարկը տվյալ օտարերկրյա պետությունում իր գործունեությունն իրականացնում է դեսպանության անմիջական քաղաքական ղեկավարությամբ:

3. Հյուպատոսական հիմնարկների գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Գ Լ ՈՒ Խ 3

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հոդված 18. Դիվանագիտական պաշտոնները և դիվանագիտական ծառայության պաշտոնները

1. Արտաքին գործերի նախարարության համակարգի պաշտոնները դասակարգվում են ըստ քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և դիվանագիտական ծառայության պաշտոնների:

2. Քաղաքական պաշտոններն են՝

1) արտաքին գործերի նախարար.

2) արտաքին գործերի նախարարի տեղակալ:

3. Վարչական պաշտոններն են՝

1) արտակարգ և լիազոր դեսպան.

2) միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցիչ.

3) արտաքին գործերի նախարարության ենթակա մարմնի ղեկավար.

4) արտաքին գործերի նախարարության ենթակա մարմնի ղեկավարի տեղակալ:

4. Հայեցողական պաշտոններն են՝

1) հատուկ հանձնարարություններով դեսպան.

2) արտաքին գործերի նախարարի խորհրդական.

3) արտաքին գործերի նախարարի մամուլի քարտուղար.

4) արտաքին գործերի նախարարի օգնական.

5) արտաքին գործերի նախարարի տեղակալի օգնական:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերում նշված պաշտոնները սույն օրենքի իմաստով համարվում են դիվանագիտական պաշտոններ, և այդ պաշտոններում նշանակված անձանց պաշտոնավարման ժամանակահատվածը հավասարեցվում է

դիվանագիտական ծառայությանը, եթե այդ պաշտոններում նշանակված անձինք ունեն սույն օրենքին համապատասխան շնորհված դիվանագիտական աստիճան:

6. Արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական ծառայության պաշտոններն են՝

1) արտաքին գործերի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար (վարչության պետ).

2) արտաքին գործերի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի խորհրդական.

3) արտաքին գործերի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի վարիչ (պետ).

4) արտաքին գործերի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի խորհրդական.

5) առաջին քարտուղար.

6) երկրորդ քարտուղար.

7) երրորդ քարտուղար.

8) կցորդ:

7. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության պաշտոններն են՝

1) գործերի հավատարմատար.

2) գլխավոր հյուպատոս.

3) դեսպանորդ-լիազոր նախարար.

4) խորհրդական.

5) հյուպատոս.

6) առաջին քարտուղար.

7) փոխհյուպատոս.

8) երկրորդ քարտուղար.

9) երրորդ քարտուղար.

10) կցորդ:

8. Արտաքին գործերի նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է, իսկ այդ կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձինք քաղաքացիական ծառայողներ են:

Հոդված 19. Դիվանագիտական աստիճանները

1. Դիվանագիտական աստիճանները լինում են բարձրագույն դիվանագիտական և դիվանագիտական:

2. Բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝

1) արտակարգ և լիազոր դեսպան.

2) արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

3. Դիվանագիտական աստիճաններն են՝

1) ավագ խորհրդական.

2) խորհրդական.

3) առաջին քարտուղար.

4) երկրորդ քարտուղար.

5) երրորդ քարտուղար.

6) կցորդ:

Հոդված 20. Դիվանագիտական ծառայության պաշտոնների և դիվանագիտական աստիճանների հարաբերակցությունը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար նվազագույն դիվանագիտական աստիճանների ցանկը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 21. Դիվանագիտական աստիճաններ շնորհելու իրավասություն ունեցող անձինք

1. Բարձրագույն դիվանագիտական աստիճանները շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ՝ արտաքին գործերի նախարարի ներկայացմամբ:

2. Վարչապետի առաջարկությանը կցվում է համապատասխան դիվանագիտական աստիճան շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը:

3. Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում Հանրապետության նախագահին վարչապետի ներկայացրած առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում համապատասխան դիվանագիտական աստիճան շնորհելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա, Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն, դիվանագիտական աստիճանը շնորհված է համարվում իրավունքի ուժով սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետն անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունն ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

7. Դիվանագիտական աստիճանները շնորհում է արտաքին գործերի նախարարը՝ արտաքին գործերի նախարարության մրցութային-ատեստավորող հանձնաժողովի (այսուհետ՝ մրցութային-ատեստավորող հանձնաժողով) եզրակացության հիման վրա:

8. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անձանց, ովքեր մինչև տվյալ պաշտոնների նշանակվելը զբաղեցրել են դիվանագիտական ծառայության պաշտոններ և չունեն բարձրագույն դիվանագիտական աստիճան, արտաքին գործերի նախարարի հրամանով կարող է շնորհվել հերթական, ժամկետից շուտ, արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան:

Հոդված 22. Դիվանագիտական աստիճանի շնորհումը

1. Սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված մրցույթի հիման վրա, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված կարգով պաշտոնի նշանակված անձին տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճանը շնորհվում է սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված փորձաշրջանն անցնելուց հետո:

2. Հերթական դիվանագիտական աստիճանը կարող է շնորհվել համապատասխանաբար ավելի ցածր դիվանագիտական աստիճանով հետևյալ ժամկետներում ծառայելու դեպքում.

1) խորհրդական՝ առնվազն չորս տարի.

2) առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարներ՝ առնվազն երեք տարի.

3) կցորդ՝ առնվազն երկու տարի:

Սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված կարգով պաշտոնի նշանակված անձանց կարող է շնորհվել երրորդ քարտուղար դիվանագիտական աստիճան՝ կցորդ դիվանագիտական աստիճանի շնորհումից մեկ տարի հետո:

3. Հերթական դիվանագիտական աստիճանի շնորհման նպատակով ատեստավորումն իրականացվում է սույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերում նշված ժամկետը լրանալուց հետո՝ մրցութային-ատեստավորող հանձնաժողովի առաջիկա նիստի ընթացքում: Հերթական դիվանագիտական աստիճանը շնորհվում է մրցութային-ատեստավորող հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

4. Բացառիկ դեպքերում ծառայության մեջ ունեցած լուրջ հաջողությունների և անբասիր աշխատանքի համար մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա դիվանագետին կարող է շնորհվել արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հերթական դիվանագիտական աստիճան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետից շուտ:

5. Արտահերթ դիվանագիտական աստիճան կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճան կարող է շնորհվել ծառայության ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ:

Հոդված 23. Դիվանագիտական աստիճանը պահպանելը և դրանից զրկելը

1. Դիվանագիտական աստիճանները շնորհվում են ցմահ:

2. Սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, ինչպես նաև 3-րդ մասի 2-րդ և 4-8-րդ կետերով սահմանված հիմքերով դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման կամ դիվանագիտական ծառայության դադարման դեպքերում Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ՝ արտաքին գործերի նախարարի ներկայացմամբ, կամ արտաքին

գործերի նախարարը կարող են տվյալ ազատված անձանց զրկել իրենց կողմից շնորհած դիվանագիտական աստիճաններից:

3. Դիվանագիտական աստիճանից զրկելու վերաբերյալ հրամանագիրը Հանրապետության նախագահի կողմից չստորագրվելու դեպքում ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով՝ Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

ԳԼՈՒԽ 4

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿՎԵԼԸ

Հոդված 24. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, որը տիրապետում է հայերենին, առնվազն երկու օտար լեզվի, ունի բարձրագույն կրթություն, բավարարում է համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները և չկան նրան պաշտոնի նշանակելու համար սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նկարագիրը և դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 25. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 26. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 2-8-րդ կետերում նշված

դիվանագիտական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու նպատակով՝ այդ պաշտոնները արտամրցութային կարգով չհամալրվելու դեպքում:

2. Մրցույթ անցկացնելու մասին մրցութային-ատեստավորող հանձնաժողովի հայտարարությունը, մրցույթի դրվող պաշտոնի նկարագիրը և մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հրապարակվում են մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ արտաքին գործերի նախարարության կայքէջում:

3. Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել մրցույթի դրված պաշտոնի նկարագրի պահանջներին համապատասխան մասնագիտություն և անհրաժեշտ աշխատանքային ստաժ ունեցողները:

4. Մրցույթի անցկացման կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 27. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու այլ կարգը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնը կարող է համալրվել արտամրցութային կարգով կամ ռոտացիայի հիման վրա:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնն արտամրցութային կարգով համալրվում է հետևյալ դեպքերում.

1) արտաքին գործերի նախարարության միևնույն կառուցվածքային ստորաբաժանումում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում, եթե դիվանագետը բավարարում է տվյալ պաշտոնի նկարագրի պահանջները և ունի այդ պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճան.

2) արտաքին գործերի նախարարության ենթակա մարմնից կառուցվածքային ստորաբաժանումում, կառուցվածքային ստորաբաժանումից ենթակա մարմնում կամ մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանումում հավասարազոր կամ ավելի բարձր պաշտոնի նշանակվելու դեպքում.

3) օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության ընթացքում ավելի բարձր պաշտոնի նշանակվելու դեպքում, եթե դիվանագետը բավարարում է այդ պաշտոնի նկարագրի պահանջները և ունի անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճան.

4) սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 2-5-րդ կետերում նշված պաշտոններից ազատվելիս արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումում կամ ենթակա մարմնում պաշտոնի նշանակվելու դեպքում, եթե

դիվանագետը բավարարում է տվյալ պաշտոնի նկարագրի պահանջները և ունի այդ պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճան.

5) սույն օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկով ծառայությունը վաղաժամկետ դադարելիս օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնից արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումում կամ ենթակա մարմնում հավասարազոր պաշտոնի նշանակվելու դեպքում.

6) սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն գործուղված դիվանագետին արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումում կամ ենթակա մարմնում հավասարազոր պաշտոնի նշանակվելու դեպքում՝ գործուղման ժամկետի ավարտից հետո.

7) սույն օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար դիվանագիտական ակադեմիայում պատրաստում անցած և բարձր ցուցանիշներով ավարտած անձանց արտաքին գործերի նախարարի սահմանած կարգով դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում.

8) սույն օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց պաշտոնի նշանակվելու դեպքում.

9) սույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց պաշտոնի նշանակվելու դեպքում:

3. Դիվանագիտական ծառայության պաշտոնը համալրվում է ռոտացիայի սկզբունքով՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնից արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումում կամ ենթակա մարմնում հավասարազոր պաշտոնի նշանակվելու դեպքում:

Հոդված 28. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակումը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնները զբաղեցվում են անժամկետ:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակումը կատարվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 29. Փորձաշրջանը

1. Առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվող անձը պաշտոնի նշանակվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով:

2. Փորձաշրջանի ընթացքում ստուգվում է անձի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին:

3. Փորձաշրջանի ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ եզրակացություն է տալիս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, որի վերաբերյալ տեղեկացվում է փորձաշրջան անցնող անձը:

4. Փորձաշրջան անցնելու կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 30. Դիվանագետի երդումը

1. Սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված փորձաշրջանի ավարտից հետո առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակված անձը մրցութային-ատեստավորող հանձնաժողովի նիստում արտաքին գործերի նախարարի ներկայությամբ տալիս է հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության դիվանագետի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, արժանապատվորեն կրել դիվանագետի բարձր կոչումը»:

2. Դիվանագետն ստորագրում է երդման տեքստը և նրան հանդիսավորությամբ շնորհվում է Հայաստանի Հանրապետության դիվանագետի վկայական, որի ձևը սահմանում է արտաքին գործերի նախարարը:

Գ Լ ՈՒ Խ 5

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՌՈՏԱՑԻԱՆ, ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ

Հոդված 31. Դիվանագետի ռոտացիան

1. Առաջին անգամ դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակված դիվանագետի ծառայությունն սկսվում է արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում:

2. Դիվանագետի ծառայությունն ընթանում է ռոտացիայի սկզբունքով՝ արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում առնվազն տասնութ ամիս, այնուհետև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում՝ երկու տարի իրար հաջորդող աշխատանքային փուլերով:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության ժամկետն անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ տարի ժամկետով:

4. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության ընթացքում դիվանագետի համաձայնությամբ թույլատրվում է դիվանագետի տեղափոխումն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության այլ մարմին ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով, պայմանով, որ պահպանվեն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված ժամկետները:

5. Գլխավոր հյուպատոսի պաշտոնում նշանակվելիս ռոտացիան ընթանում է արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում առնվազն մեկ տարի, այնուհետև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում՝ երեք տարի ժամկետով ծառայելու սկզբունքով: Գլխավոր հյուպատոսի պաշտոնավարման ժամկետը անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ տարի ժամկետով:

6. Չի թույլատրվում օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում աշխատանքային փուլի ժամկետը լրանալուց անմիջապես հետո դիվանագետի նշանակումն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մեկ այլ մարմին:

7. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետի ծառայությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝

1) անձնական դիմումի համաձայն.

2) գործառույթները կատարելու անհնարինության դեպքում.

3) միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ հանգամանքներ առաջանալու դեպքում.

4) ծառայողական անհրաժեշտության դեպքում:

8. Ռոտացիայի կարգը և դրա համար հավասարազոր պաշտոնների ցանկը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

9. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 2-5-րդ կետերում նշված պաշտոններից օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում նշանակում կատարվում է, եթե դիվանագետն ունի այդ պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճան:

Հոդված 32. Կարճաժամկետ գործուղումը

1. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի աշխատանքներին աջակցելու նպատակով դիվանագետը իր համաձայնությամբ կարող է գործուղվել օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին: Կարճաժամկետ գործուղումը չի կարող գերազանցել 6 ամիսը:

2. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին կարճաժամկետ գործուղված դիվանագետին աշխատավարձից բացի վճարվում է ռոտացիայի հիման վրա օտարերկրյա պետություն մեկնած դիվանագետի համար նախատեսված փոխհատուցումը, բնակարանային փոխհատուցումը, Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու և օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերը, անհետաձգելի դեպքերում տրամադրվում է նաև բժշկական ապահովագրություն:

3. Եթե օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին գործուղումը գերազանցում է 2 ամիսը, ապա դիվանագետին վճարվում է նաև սույն օրենքով դիվանագետի ընտանիքի անդամների համար նախատեսված փոխհատուցումները:

4. Կարճաժամկետ գործուղման ընթացքում պահպանվում է դիվանագետի աշխատավարձը արտաքին գործերի նախարարությունում:

Հոդված 33. Գործուղումը

1. Դիվանագետն իր համաձայնությամբ արտաքին գործերի նախարարությունից կամ ենթակա մարմնից կարող է գործուղվել Հանրապետության նախագահի աշխատակազմ, Ազգային ժողովի աշխատակազմ, վարչապետի աշխատակազմ և պետական կառավարման համակարգի մարմիններ՝ արտաքին գործերի նախարարության և համապատասխան մարմնի միջև գրավոր համաձայնության դեպքում:

2. Գործուղման ժամանակահատվածում դիվանագետը համարվում է դիվանագիտական ծառայության մեջ և նրա վրա տարածվում են սույն օրենքով դիվանագետի համար սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները:

3. Հանրապետության նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովի աշխատակազմից, վարչապետի աշխատակազմից և պետական կառավարման համակարգի, բացառիկ դեպքերում պետական անվտանգության կամ Հայաստանի

Հանրապետության քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու անվտանգության պաշտպանության նպատակով այլ մարմիններից համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք կարող են գործուղվել արտաքին գործերի նախարարության համակարգ՝ արտաքին գործերի նախարարության և համապատասխան մարմնի միջև գրավոր համաձայնության դեպքում:

4. Արտաքին գործերի նախարարությունից կամ ենթակա մարմնից Հանրապետության նախագահի աշխատակազմ, Ազգային ժողովի աշխատակազմ, վարչապետի աշխատակազմ և պետական կառավարման համակարգի մարմիններ, ինչպես նաև Հանրապետության նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովի աշխատակազմից, վարչապետի աշխատակազմից և պետական կառավարման համակարգի, բացառիկ դեպքերում պետական անվտանգության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու անվտանգության պաշտպանության նպատակով այլ մարմիններից արտաքին գործերի նախարարության համակարգ գործուղման կարգը սահմանում է Կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

Հոդված 34. Դիվանագետի ատեստավորումը

1. Դիվանագետի ատեստավորումն իրականացնում է մրցութային-ատեստավորող հանձնաժողովը սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 2-8-րդ կետերում և 7-րդ մասի 4-10-րդ կետերում նշված դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող դիվանագետին դիվանագիտական աստիճան շնորհելու, ինչպես նաև սահմանված կարգով իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով:

2. Ատեստավորումն իրականացվում է հարցազրույցի միջոցով, եթե մրցութային-ատեստավորող հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի ատեստավորումն իրականացվում է փաստաթղթային ուսումնասիրության միջոցով, եթե մրցութային-ատեստավորող հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում:

4. Դիվանագետի արտահերթ ատեստավորում կարող է իրականացվել դիվանագետի հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված արտահերթ կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճան շնորհելու դեպքում:

5. Դիվանագետի ատեստավորման կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 35. Դիվանագետի վերապատրաստումը

1. Դիվանագետի վերապատրաստումն իրականացվում է դիվանագետի դիմումով կամ սույն օրենքի 34-րդ հոդվածի համաձայն իրականացված ատեստավորման արդյունքում մրցութային-ատեստավորող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայում, օտարերկրյա պետության համապատասխան ուսումնական հաստատությունում կամ միջազգային կազմակերպությունում կազմակերպվող դասընթացներին մասնակցության միջոցով:

2. Դիվանագետի վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են արտաքին գործերի նախարարության՝ պետական բյուջեով հաստատված միջոցների հաշվին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցների հաշվին՝ նրանց հրավերով, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

3. Դիվանագետի վերապատրաստման կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

4. Մինչև վեց ամիս ժամկետով վերապատրաստման դեպքում պահպանվում է դիվանագետի աշխատավարձը:

Հոդված 36. Դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվը

1. Դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են այն դիվանագետները, որոնք ազատվել են զբաղեցրած պաշտոնից հետևյալ հիմքերից որևէ մեկով.

1) արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ միջազգային կազմակերպությունում աշխատանքի անցնելը՝ մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը.

2) արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ մինչև 3 տարի ժամկետով ուսանելը կամ գիտական գործունեությամբ զբաղվելը.

3) սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը՝ մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը, բացառությամբ՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի.

4) սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում սահմանված հիմքով դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելը՝ մինչև 1 տարի ժամկետով.

5) սույն օրենքի 55-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձը՝ մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը.

6) սույն օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձինք՝ մինչև 1 տարի ժամկետով:

2. Դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում մինչև 1 տարի ժամկետով կարող են գրանցվել նաև դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:

3. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը հաշվարկվում է դիվանագիտական ծառայության ստաժի մեջ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում դիվանագետներին գրանցելու և ռեզերվից հանելու կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Գ Լ ՈՒ Խ 7

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ-ԱՏԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 37. Մրցութային-ատեստավորող հանձնաժողովը

1. Դիվանագիտական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու, ինչպես նաև ատեստավորման արդյունքում դիվանագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով արտաքին գործերի նախարարությունում ստեղծվում է մրցութային-ատեստավորող հանձնաժողով:

2. Մրցութային-ատեստավորող հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 38. Դիվանագետների էթիկայի հանձնաժողովը

1. Դիվանագետների վարքագծի կանոնները (բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների) կամ անհամատեղելիության պահանջները կամ դիվանագետի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները կամ շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է դիվանագետների էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ էթիկայի հանձնաժողով):

2. Դիվանագետների վարքագծի կանոնները սահմանում է արտաքին գործերի նախարարը:

3. Էթիկայի հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանում է արտաքին գործերի նախարարը:

4. Էթիկայի հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, անկախ է իրեն առաջադրած և նշանակած պաշտոնատար անձանցից: Արգելվում է որևէ կերպ ներգործել հանձնաժողովի անդամի վրա կամ միջամտել նրա գործունեությանը:

5. Էթիկայի հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե նա «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով վարույթի մասնակցի հետ փոխկապակցված անձ է կամ առնչվում է քննարկվող հարցին և դրանով հանդիսանում է շահագրգիռ անձ կամ որևէ կերպ շահագրգռված է տվյալ գործի ելքով:

6. Դիվանագետը, որպես հանձնաժողովի անդամ և դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար:

Հոդված 39. Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները

1. Էթիկայի հանձնաժողովը՝

1) քննում է դիվանագետների վարքագծի կանոնների (բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների), անհամատեղելիության պահանջների,

դիվանագիտական ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների և շահերի բախման կանոնների վերաբերյալ ենթադրյալ խախտումները.

2) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պաշտոնատար անձին՝ ուղղված դիվանագետների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների վերաբերյալ խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն.

3) վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2. Եթե ծառայողական քննության ընթացքում էթիկայի հանձնաժողովը պարզում է, որ խախտումը իր բնույթով չի հանդիսանում դիվանագետի նկատմամբ վարքագծի կանոնի, անհամատեղելիության պահանջի, այլ սահմանափակման և շահերի բախման կանոնի խախտում և կատարված արարքը կարող է պարունակել այլ խախտման հատկանիշներ, ապա հանձնաժողովը դադարեցնում է ծառայողական քննությունը և միջնորդություն է ներկայացնում ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ հետագա ընթացքը ապահովելու համար:

Հոդված 40. Էթիկայի հանձնաժողովի եզրակացության քննարկումը

1. Ծառայողական քննության արդյունքում էթիկայի հանձնաժողովը ընդունում է եզրակացություն խախտման առկայության կամ բացակայության մասին, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները: Խախտման առկայության վերաբերյալ եզրակացությունը ներառում է դիվանագետին կարգապահական տույժի ենթարկելու մասին առաջարկություն: Եզրակացությունը մեկօրյա ժամկետում ուղարկում է ծառայողական քննության կողմերին և արտաքին գործերի նախարարին:

2. Դիվանագետն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը կարող է բողոքարկել այն ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ բողոքի մեկ օրինակը ներկայացնելով նախարարին:

3. Արտաքին գործերի նախարարը, եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան

եզրակացությունը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների հիման վրա ընդունում է դիվանագետին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու վերաբերյալ որոշում: Որոշումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է դիվանագետին և էթիկայի հանձնաժողովին:

Գ Լ ՈՒ Խ 8

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 41. Դիվանագետների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները

1. Ծառայողական պարտականությունները, հատուկ առաջադրանքները լավագույնս կատարելու, երկարամյա ծառայության, անբասիր աշխատանքի, ծառայության մեջ ունեցած նվաճումների համար դիվանագետի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) արտաքին գործերի նախարարության հուշամեդալով, մեդալով պարգևատրում.

4) հուշանվերով պարգևատրում.

5) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

6) կարգապահական տույժի հանում.

7) օրենքով սահմանված խրախուսանքի այլ միջոցներ:

2. Խրախուսանքի միջոցները կիրառում է արտաքին գործերի նախարարը:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ կարող է կիրառել սույն հոդվածում նշված խրախուսանքի միջոցները:

4. Արտաքին գործերի նախարարության հուշամեդալով, մեդալով պարգևատրման կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 42. Դիվանագետների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու կամ կարգապահական կանոնները կամ վարքագծի կանոնները (բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների) կամ անհամատեղելիության պահանջները կամ այլ սահմանափակումները, կամ շահերի բախման կանոնները խախտելու դեպքում դիվանագետի նկատմամբ կարող է կիրառվել հետևյալ կարգապահական տույժերից որևէ մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) ծառայության դադարեցում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառվում է բացառապես անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում:

3. Կարգապահական տույժերը կիրառում է արտաքին գործերի նախարարը:

4. Մինչև կարգապահական տույժ կիրառելը կարգապահական խախտում թույլ տված անձից պահանջվում է գրավոր բացատրություն:

5. Կարգապահական տույժը չի կիրառվում, եթե կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից անցել է երեք ամիս, իսկ կարգապահական խախտում կատարելու օրվանից՝ վեց ամիս:

6. Կարգապահական տույժ կիրառելու մասին անձին տեղեկացվում է կարգապահական տույժ կիրառելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

8. Եթե կարգապահական տույժ կիրառելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժ չի կիրառվել, ապա անձը համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

Հոդված 43. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման և ծառայության դադարման հիմքերը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերն են.

1) անձնական դիմումը.

2) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը.

3) հաստիքների կրճատումը.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը (բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդի).

5) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

6) մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացությունը՝ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին.

7) սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատում է արտաքին գործերի նախարարը:

3. Դիվանագիտական ծառայության դադարման հիմքերն են.

1) դիվանագետի մահը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը.

3) ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությամբ տառապելը.

4) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելը.

5) ազատազրկման դատապարտելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը.

6) անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը.

7) դատական կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը.

8) դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը:

4. Դիվանագիտական ծառայությունը դադարեցվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Գ Լ ՈՒ Խ 9

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 44. Դիվանագետի իրավունքները

1. Դիվանագետի իրավունքներն են՝

1) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված իրավունքները.

2) իր իրավասության շրջանակում որոշումներ ընդունելը՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով անմիջական ղեկավարի հետ, և հարցերի քննարկումներին մասնակցելը.

3) աշխատանքի, աշխատավարձի, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններով ապահովվածությունը.

4) սոցիալական ապահովությունը.

5) սահմանված կարգով դիվանագիտական աստիճանի բարձրացումը.

6) վերապատրաստումը, եթե չի իրականացվում մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա.

7) ատեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.

8) դիվանագիտական ծառայության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Հոդված 45. Դիվանագետի պարտականությունները

1. Դիվանագետի պարտականություններն են՝

1) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պարտականությունները.

2) մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները մշտապես կատարելագործելը.

3) իր իրավասության շրջանակում մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելը.

4) իր իրավասության շրջանակում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելն ու օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալը.

5) պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում.

6) դիվանագետի էթիկայի և կարգապահական կանոնները պահպանելը:

Հոդված 46. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը

1. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը վարելու կարգը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված 47. Դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները

1. Դիվանագետն իրավունք չունի՝

1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) խախտելու քաղաքական զսպվածության սկզբունքը՝ զբաղվելու կուսակցական գործունեությամբ կամ իր ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցներն օգտագործելու կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.

4) խախտելու «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները, պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ հրաժարվելու գաղտնիքին առնչվելու թույլտվության ձևակերպման սահմանված ընթացակարգն անցնելուց:

2. Դիվանագետին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու եղբայր, քույր, ծնող և զավակ) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

3. Դիվանագետը պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման:

4. Դիվանագետն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտներ:

Հոդված 48. Դիվանագետի սոցիալական երաշխիքները

1. Պետությունը դիվանագետի համար երաշխավորում է՝

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ.

2) վարձատրություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.

3) ամենամյա վճարովի արձակուրդ.

4) օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայելու ընթացքում բժշկական ապահովագրություն, ներառյալ՝ իր ընտանիքի անդամների համար, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին՝ ըստ բժշկական ապահովագրության պայմանագրերի.

5) ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած հաշմանդամության դեպքում դիվանագետին, իսկ զոհվելու դեպքում՝ իր ընտանիքի անդամներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստներով ապահովում՝ պատճառված վնասի միաժամանակյա փոխհատուցմամբ.

6) կենսաթոշակի անցնելիս, կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու հիմքով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն դիվանագիտական աստիճանի համար տրվող հավելավճարի պահպանում՝ Կառավարության սահմանած կարգով.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դիվանագետի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված՝ իր և իր ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովումը բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.

8) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցումը.

9) օրենքով սահմանված այլ սոցիալական երաշխիքներ:

Հոդված 49. Դիվանագետի վարձատրությունը և դիվանագիտական ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցումը

1. Դիվանագետի վարձատրության հետ կապված հարաբերությունները և առանձնահատկությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

2. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին աշխատավարձից բացի, վճարվում է ամսական փոխհատուցում օտարերկրյա պետությունում ծառայության հետ կապված ծախսերի համար՝ ըստ տվյալ երկրի կենսամակարդակի հիման վրա հաշվարկված գործակցի՝ Կառավարության սահմանած չափով:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին վճարվում է փոխհատուցում նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված փոխհատուցման 10 տոկոսի չափով:

4. Դիվանագետի ամուսնու համար սույն հոդվածի 3-րդ մասում նշված փոխհատուցումը չի վճարվում, եթե նա օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում զբաղեցնում է դիվանագիտական ծառայության պաշտոն կամ եթե սույն օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անցնում է աշխատանքի դեսպանընկալ պետությունում:

5. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի հետ բնակվող իր երեխաների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսման ծախսերը հոգալու նպատակով դիվանագետին վճարվում է փոխհատուցում՝ Կառավարության սահմանած կարգով և չափով, մինչև նրանց 18 տարին լրանալը:

6. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին տրվում է նրա դիվանագիտական աստիճանին, զբաղեցրած պաշտոնին և ընտանիքի անդամների թվին համապատասխան բնակարանի համար փոխհատուցում՝ Կառավարության սահմանած չափով:

7. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու և օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերը, ներառյալ՝ անձնական օգտագործման ուղեբեռի և տրանսպորտային միջոցի տեղափոխման ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարին և նրա ընտանիքի անդամներին՝ ծառայության յուրաքանչյուր տարվա ընթացքում մեկ անգամ, իսկ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայություն անցնող դիվանագետին և նրա ընտանիքի անդամներին ծառայության ամբողջ ընթացքում մեկ անգամ վճարվում է Հայաստանի Հանրապետությունում արձակուրդն անցկացնելու համար ճանապարհածախսը:

Հոդված 50. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնած դիվանագետի ամուսնու իրավունքները

1. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնող դիվանագետի հետ կարող են մեկնել դիվանագետի ընտանիքի անդամները:

2. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնող դիվանագետ ամուսնու հետ մեկնելիս՝ պետական մարմնում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող դիվանագետի ամուսինը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին ներկայացնում է դիմում՝ իր դիվանագետ ամուսնու հետ օտարերկրյա պետություն մեկնելու մասին: Օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակահատվածում դիվանագետի ամուսնու՝ պետական մարմնում զբաղեցրած համապատասխան պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր:

3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած դիվանագետի ամուսինն օտարերկրյա պետությունից վերադառնալուց հետո պետական մարմնում վերականգնվում է (նշանակվում է) հանրային ծառայության իր զբաղեցրած պաշտոնում, իսկ անհնարինության դեպքում՝ այլ հավասարազոր պաշտոնում: Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնած դիվանագետի ամուսնու՝ օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակահատվածը դիվանագետի ամուսնու աշխատանքային ստաժում հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Դիվանագետի ամուսինը կարող է աշխատել դեսպանընկալ պետությունում, որտեղ ծառայում է նրա ամուսինը, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ թույլատրվում է տվյալ երկրի օրենսդրությամբ՝ նախապես տեղեկացնելով արտաքին գործերի նախարարությանը:

Հոդված 51. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կենսաթոշակի ապահովումը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կենսաթոշակի ապահովումը և կենսաթոշակ նշանակելու պայմանները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող դրամական օգնությունը և վճարումները, ծառայության ստաժի հաշվարկման կարգը, ինչպես նաև սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով:

Գ Լ ՈՒ Խ 10

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հոդված 52. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը (այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր) դիվանագետի և սույն օրենքով դիվանագիտական անձնագիր կրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը հավաստող կենսաչափական տվյալներ պարունակող փաստաթուղթ է, որը նախատեսված է օտարերկրյա պետություններում պաշտոնական կամ դիվանագիտական առաքելություն իրականացնելու համար:

2. Դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

3. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հիման վրա՝ առավելագույնը հինգ տարի վավերականության ժամկետով:

Հոդված 53. Դիվանագիտական անձնագիր կրելու իրավունք ունեցող անձինք

1. Դիվանագիտական անձնագիր տրվում է՝

1) Հանրապետության նախագահին, վարչապետին, Ազգային ժողովի նախագահին, Սահմանադրական դատարանի նախագահին, Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և նրանց ընտանիքների անդամներին.

2) Հանրապետության պաշտոնաթող նախագահին.

3) 2018 թվականից հետո պաշտոնաթող վարչապետին.

4) Սահմանադրական դատարանի դատավորներին.

5) կառավարության անդամներին, Անվտանգության խորհրդի քարտուղարին, Անվտանգության խորհրդի անդամներին, Ազգային ժողովի պատգամավորներին, Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների ղեկավարներին, իսկ կոլեգիալ մարմինների դեպքում՝ դրանց նախագահներին, վճռաբեկ դատարանի նախագահին, գլխավոր դատախազին, կենտրոնական բանկի նախագահին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին.

6) դիվանագետին, դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարին.

7) դիվանագետի, դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի հետ օտարերկրյա պետություն դիվանագիտական ծառայության մարմին մեկնելիս նրանց ամուսիններին և մինչև 21 տարեկան չամուսնացած զավակներին.

8) արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում պաշտոն զբաղեցնող անձանց՝ գործուղվելու նպատակով.

9) սույն օրենքի 10-րդ հոդվածում նշված կցորդներին, ներկայացուցիչներին, ինչպես նաև նրանց ամուսիններին և մինչև 21 տարեկան չամուսնացած զավակներին՝ նրանց հետ օտարերկրյա պետություն մեկնելիս.

10) սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված անձանց.

11) Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կառույցներում նշանակված կամ ներկայացված այն պաշտոնատար անձանց և աշխատակիցներին, որոնց տրվում են դիվանագիտական կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին հավասարեցված արտոնություններ, ինչպես նաև նրանց ամուսիններին և մինչև 21 տարեկան չամուսնացած զավակներին՝ նրանց հետ օտարերկրյա պետություն մեկնելիս:

2. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված անձանց դիվանագիտական անձնագիր տրվում է վարչապետի թույլտվությամբ:

Գ Լ ՈՒ Խ 11

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 54. Դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորումը

1. Դիվանագիտական ծառայության մարմինները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

2. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմինները պետական բյուջեի միջոցներից բացի, կարող են ֆինանսավորվել նաև այլ աղբյուրներից՝ Կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 12

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Հոդված 55. Դիվանագիտական ակադեմիա

1. Դիվանագիտական ակադեմիան պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Դիվանագիտական ակադեմիայի կառուցվածքը և գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, ակադեմիայի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. Դիվանագիտական ակադեմիան, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը.

2) դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անձանց պատրաստումը.

3) գիտական, վերլուծական ուսումնասիրությունների իրականացումը.

4) վերլուծական կենտրոնների հետ փոխգործակցությունը.

5) արտաքին քաղաքականության հիմնահարցերի շուրջ միջոցառումների (քննարկման հարթակների, համաժողովների, սեմինարների) կազմակերպումը.

6) արտաքին քաղաքականության հիմնահարցերի թեմաներով ուսումնական ծրագրերի մշակումը.

7) ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը.

8) միջազգային և տարածաշրջանային գործընթացների զարգացման հեռանկարների շուրջ քննարկումների կազմակերպումը, առաջարկությունների ներկայացումը.

9) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

3. Դիվանագիտական ակադեմիան իր գործունեության և նպատակների իրականացման համար կարող է իրականացնել կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեություն:

4. Դիվանագիտական ակադեմիան ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5. Ակադեմիայի տնօրենի պաշտոնում դիվանագետի նշանակման դեպքում այդ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը հաշվարկվում է դիվանագիտական ծառայության ստաժում, և նրա վրա տարածվում են սույն օրենքով դիվանագետի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:»:

Հոդված 2. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող ամսվա առաջին օրվանից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կադրերի ռեզերվում գրանցման իրավունք ունեցող կամ իրավունք ձեռք բերած անձինք կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետներով, որի հաշվարկը սկսվում է օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրացած և դիվանագիտական ծառայության պաշտոնում մինչև երեք տարի ժամկետով պաշտոնավորող դիվանագետները շարունակում են պաշտոնավարել անժամկետ:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

5. Սույն օրենքի 52-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթերի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

6. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը ուժը կորցրած ճանաչել 2026 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված

«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (Կ-1304[5]-03.04.2026-ԱՍ-011):

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-**1346**-27.04.2026-ԱՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու կարգերը, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց կարգավիճակը, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների իրավունքները, սոցիալական երաշխիքները, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքները, ինչպես նաև կարգավորվում են դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

2. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, պաշտոնների դասակարգման և համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, ~~իրավական~~ կարգաւիճակի, պաշտոնից ազատման և ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~3.~~ Դիվանագիտական ծառայության, ինչպես նաև ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային ~~օրենսգրքով~~օրենսդրությամբ, եթե սույն օրենքով ~~առանձնահատկություններ սահմանված չեն~~այլ բան նախատեսված չէ:

~~(1-ին հոդվածը խմբ. 15.06.22 ՀՕ-256-Ն)~~

~~(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)~~

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմինների և դրանցում դիվանագիտական պաշտոններ և դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց ~~(այսուհետ՝ դիվանագետ)~~վրա:

~~2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև աշխատանքային պայմանագրով վարչատեխնիկական կամ սպասարկման գործառույթներ իրականացնող անձանց վրա:~~

~~3~~2. Օտարերկրյա պետություններում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ~~ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների~~ ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում օտարերկրյա քաղաքացիների կամ այդ պետության մշտական ~~բնակիչներ համարվողբնակության իրավունք ունեցող~~՝ քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ~~աշխատանքի ընդունելու դեպքում հաշվի են առնվում~~ հաշվի առնելով նաև տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև այդ

պետության հետ կնքված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համապատասխան պահանջները:

3. Օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմի պաշտոնների անվանացանկը և դրույքաչափը սահմանվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

~~**Հոդված 3. Դիվանագիտական ծառայությունը**~~

~~1. Դիվանագիտական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որը դիվանագիտական ծառայության մարմիններում իրականացնում են դիվանագետները սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

~~*(3-րդ հոդվածը փոփ. 15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

~~*(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 3. Դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությունը

1. Դիվանագիտական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Հոդված 4. Դիվանագիտական ծառայության խնդիրները

1. Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:

~~1)~~

Հոդված 5. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **դիվանագետ՝** դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոն կամ դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձ.

2) **դիվանագիտական ծառայություն՝** մասնագիտական գործունեություն, որը դիվանագիտական ծառայության մարմիններում իրականացնում են դիվանագետները սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով.

3) **օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավար՝** արտակարգ և լիազոր դեսպան, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցիչ (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցիչներ), գլխավոր հյուպատոս, գործերի հավատարմատար.

~~2)~~ 4) **դիվանագիտական աստիճան՝** հատուկ դասային աստիճան, որը դիվանագետին շնորհվում է դիվանագիտական ծառայության անցնելիս և ծառայության ընթացքում.

5) **ռոտացիա՝** արտաքին գործերի նախարարությունում կամ արտաքին գործերի նախարարությանը ենթակա մարմնում (այսուհետ՝ ենթակա մարմին) և օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության հավասարազոր պաշտոններում իրար հաջորդող աշխատանքային փուլերով պաշտոնավարություն.

6) –**դիվանագետի ընտանիքի անդամ՝** ամուսին և մինչև 18 տարեկան երեխա:

Հոդված ~~5~~6. Դիվանագիտական ծառայության մարմինները

1. ~~Հայաստանի Հանրապետության դ~~Դիվանագիտական ծառայության մարմիններն են՝

1) ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարությունը.

2) ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարությանը ենթակա մարմինը.

3) ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարությանը ենթակա՝ օտարերկրյա պետություններում գործող ~~առանձնացված~~ կառուցվածքային ստորաբաժանումները (այսուհետ՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին~~ներ~~)՝

ա. ~~Հայաստանի Հանրապետության~~ դեսպանությունները.~~,~~

բ. միջազգային կազմակերպություններում ~~Հայաստանի Հանրապետության~~ մշտական ներկայացուցչությունները (այսուհետ՝ մշտական ներկայացուցչություն).~~,~~

գ. ~~Հայաստանի Հանրապետության~~ հյուպատոսական հիմնարկները:

2. Օտարերկրյա պետության հետ ձեռք բերված համաձայնությամբ՝ օտարերկրյա պետությունում հավատարմագրված դեսպանի ընդհանուր ղեկավարությամբ կարող է գործել դիվանագիտական գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ):

3. Սույն հոդվածում~~ի 1-ին մասում~~ նշված դիվանագիտական ծառայության մարմինները կազմում են ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարության համակարգը:

~~**Հոդված 6. Դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությունը**~~

~~1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

~~3. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է սույն օրենքով, ապա կիրառվում են այդ պայմանագրերի նորմերը:~~

~~*(6-րդ հոդվածը փոփ. 15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

~~*(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Գ Լ ՈՒ Խ 2

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարությունը

1. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարությունը պետական կառավարման համակարգի լիազոր մարմին է, որը մշակում և

իրականացնում է Կառավարության արտաքին քաղաքականությունը՝ սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Հոդված 8. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարության ղեկավարումը

1. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարությունը ղեկավարում է ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարը:

~~2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը նշանակվում է Կառավարության անդամների նշանակման համար Սահմանադրությամբ սահմանված կարգով:~~

~~3~~2. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարի հրամանով արտաքին քաղաքականության առանձին բնագավառների, գործառույթների -և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա ~~պետական~~ մարմնի գործունեության համակարգումը կարող է վերապահվել նախարարին, ինչպես նաև նախարարի տեղակալներին:

~~4. *(մասն ուժը կորցրել է 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~5~~3. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարի տեղակալը գործում է ~~պետական մարմնի ղեկավարից~~ արտաքին գործերի նախարարի կողմից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքները ~~(գործունեությունը)~~ իրեն հանձնարարված բնագավառներում:

~~6~~4. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարի և ~~նրա~~ տեղակալների լիազորությունները, ինչպես նաև դրանց իրականացման հետ առնչվող հարցերը սահմանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, սույն օրենք~~ներ~~ով և~~, իսկ դրանց իրականացման հետ առնչվող հարցերը սահմանվում են~~ արտաքին գործերի նախարարության կանոնադրությամբ:

~~*(8-րդ հոդվածը փոփ. 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~*(11.12.23 ՀՕ-405-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 9. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը

~~*(վերնագիրը լրաց. 15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

1. ~~Հայաստանի Հանրապետության ա~~Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ գլխավոր քարտուղար) պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ պետական մարմնի գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:

~~2. *(մասն ուժը կորցրել է 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~3. *(մասն ուժը կորցրել է 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

4~~2~~. ~~Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գ~~Գլխավոր քարտուղարն ունի տեղակալ, որը քաղաքացիական ծառայող է:

~~*(9-րդ հոդվածը լրաց., փոփ. 15.06.22 ՀՕ-256-Ն, խմբ. 14.07.22 ՀՕ-279-Ն, խմբ., փոփ. 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~*(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

~~*(11.12.23 ՀՕ-405-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 10. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմինները

1. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմիններն իրականացնում ~~է~~են պաշտոնական հարաբերությունները հավատարմագրման պետության հետ և ներկայացնում ~~է~~են Հայաստանի Հանրապետությունն այդ պետությունում և (կամ) միջազգային կազմակերպությունում:

2. ~~Միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մ~~Մշտական ներկայացուցչությունն իրականացնում է պաշտոնական հարաբերություններ և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպությունն~~ներ~~ում: Կախված միջազգային կազմակերպությունում ընդունված կարգից՝ մշտական ներկայացուցչությունը կարող է ունենալ նաև այլ անվանում՝ առաքելություն, պատվիրակություն և այլն:

3. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմիններն իրենց գործունեությամբ ենթակա և հաշվետու ~~է~~են ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարի~~նությանը~~:

4. Օտարերկրյա պետությունն~~եր~~ում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմինների գործառույթները և գործունեության հետ կապված հարցերը սահմանվում են սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ

իրավական ակտերով: Օտարերկրյա պետություն~~ներ~~ում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմնի կանոնադրությունը հաստատվում է արտաքին գործերի նախարարի~~ը~~ հրամանով:

5. Կառավարության որոշման հիման վրա օտարերկրյա պետություն~~ներ~~ում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմնին կից կարող են գործել պաշտպանության հարցերով կցորդներ, ռազմական և առևտրական կցորդներ կամ ներկայացուցիչներ, մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ~~Հայաստանի Հանրապետության~~ ներկայացուցիչներ:

6. Պաշտպանության հարցերով կցորդները, ռազմական կցորդները և ներկայացուցիչները կարող են ունենալ տեղակալներ և օգնականներ:

7. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություն~~ներ~~ում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմնին կից Կառավարության որոշմամբ կարող են գործել այլ կցորդներ և ներկայացուցիչներ՝ այդ պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

8. Սույն հոդվածում~~ի 5-րդ և 7-րդ մասերում~~ նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և ներկայացուցիչների տեղակալների և օգնականների հաստիքները սահմանվում են վարչապետի որոշմամբ՝ իրավասու մարմնի ներկայացմամբ՝ համաձայնեցված արտաքին գործերի նախարարության հետ:

9. Սույն հոդվածում~~ի 5-րդ և 7-րդ մասերում~~ նշված կցորդները և ներկայացուցիչները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են վարչապետի որոշմամբ, իսկ պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և ներկայացուցիչների տեղակալները և օգնականները՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի հրամանով՝ համաձայնեցված արտաքին գործերի նախարարության հետ:

10. Սույն հոդվածում~~ի 5-րդ և 7-րդ մասերում~~ նշված կցորդները և ներկայացուցիչները գործում են օտարերկրյա պետություն~~ներ~~ում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ:

11. Սույն հոդվածում~~ի 5-րդ և 7-րդ մասերում~~ նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով կցորդների, ռազմական կցորդների և ներկայացուցիչների տեղակալների և օգնականների ~~առաջադրման,~~ պաշտոնի նշանակման~~,~~ և ազատման, ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ինչպես նաև կարգավիճակի, գործունեության և

լիազորությունների շրջանակի, ~~գործունեության,~~ նրանց և նրանց ընտանիքների անդամների պահպանման ծախսերի ֆինանսավորման կարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կառավարության որոշմամբ:

~~*(10-րդ հոդվածը խմբ., լրաց. 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~*(11.12.23 ՀՕ-405-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 11. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմիններ~~ի~~ ստեղծումը և լուծարումը

1. ~~Հայաստանի Հանրապետության դ~~Դեսպանությունն ստեղծվում է Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:

2. ~~Հայաստանի Հանրապետության դ~~Դեսպանությունը կարող է լուծարվել Կառավարության որոշմամբ՝ տվյալ օտարերկրյա պետության հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հարաբերությունները խզելու, ինչպես նաև դեսպանության պահպանումը որևէ պատճառով նպատակահարմար չլինելու դեպքերում:

3. ~~Միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մ~~Մշտական ներկայացուցչությունն ստեղծվում և լուծարվում է Կառավարության որոշմամբ՝ տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ միջազգային կազմակերպությունում ընդունված կարգի համաձայն:

4. Հյուպատոսական հիմնարկը ստեղծվում և լուծարվում է Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածությամբ և պայմաններով:

5. Գրասենյակը ստեղծվում և լուծարվում է վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա:

~~5~~6. ~~Հայաստանի Հանրապետության դեսպանությունը և միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունը~~ Դիվանագիտական ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով կարող են միաժամանակ հավատարմագրվել մեկից ավելի օտարերկրյա պետություններում և/կամ միջազգային կազմակերպություններում:

~~6~~7. ~~Հայաստանի Հանրապետության դ~~Դեսպանությունը և ~~միջազգային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության~~ մշտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով անհրաժեշտության դեպքում կարող է ~~են~~ որևէ օտարերկրյա պետության շահերը ներկայացնել այլ օտարերկրյա պետությունում կամ միջազգային կազմակերպությունում:

~~7~~8. Օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետության հետ փոխադարձ համաձայնությամբ կարող է Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնել այլ օտարերկրյա պետությունում կամ միջազգային կազմակերպությունում՝ ընդունող պետության կամ միջազգային կազմակերպության հետ նախապես ~~ձեռք բերված~~ պայմանավորվածության հիման վրա:

Հոդված 12. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմինների գործառույթները

1. ~~Հայաստանի Հանրապետության դ~~Դեսպանության գործառույթներն են՝

1) ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը համապատասխան օտարերկրյա պետությունում (այսուհետ՝ դեսպանընկալ պետություն) և ապահովել պաշտոնական հարաբերություններն այդ պետության հետ.

2) խրախուսել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության ու դեսպանընկալ պետության միջև բարեկամական հարաբերությունները և նպաստել փոխշահավետ կապերի զարգացմանը քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում.

3) պաշտպանել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը դեսպանընկալ պետությունում.

4) պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը.

5) նպաստել դեսպանընկալ պետության հետ կնքած միջազգային պայմանագրերի կատարմանը.

6) վարել բանակցություններ դեսպանընկալ պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների հետ.

7) իրականացնել միջազգային իրավունքի նորմերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հյուպատոսական~~ գործողություններ~~ գործառույթներ.

5. Էթիկայի հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե նա «Հանրային ծառայության մասին» օրենքի ~~33-րդ հոդվածի~~ իմաստով վարույթի մասնակցի հետ փոխկապակցված անձ է կամ առնչվում է քննարկվող հարցին և դրանով հանդիսանում է շահագրգիռ անձ կամ որևէ կերպ շահագրգռված է տվյալ գործի ելքով:

6. Դիվանագետը, որպես հանձնաժողովի անդամ և դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար:

Հոդված 39. Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները

1. Էթիկայի հանձնաժողովը՝

1) քննում է դիվանագետների վարքագծի կանոնների (բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների), անհամատեղելիության պահանջների, դիվանագիտական ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների և շահերի բախման կանոնների վերաբերյալ ենթադրյալ խախտումները.

2) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պաշտոնատար անձին՝ ուղղված դիվանագետների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների վերաբերյալ խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն.

3) վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2. Եթե ծառայողական քննության ընթացքում էթիկայի հանձնաժողովը պարզում է, որ խախտումը իր բնույթով չի հանդիսանում դիվանագետի նկատմամբ վարքագծի կանոնի, անհամատեղելիության պահանջի, այլ սահմանափակման և շահերի բախման կանոնի խախտում և կատարված արարքը կարող է պարունակել այլ խախտման հատկանիշներ, ապա հանձնաժողովը դադարեցնում է

ծառայողական քննությունը և միջնորդություն է ներկայացնում ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ հետագա ընթացքը ապահովելու համար:

Հոդված 40. Էթիկայի հանձնաժողովի եզրակացության քննարկումը

1. Ծառայողական քննության արդյունքում էթիկայի հանձնաժողովը ընդունում է եզրակացություն խախտման առկայության կամ բացակայության մասին, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները: Խախտման առկայության վերաբերյալ եզրակացությունը ներառում է դիվանագետին կարգապահական տույժի ենթարկելու մասին առաջարկություն: Եզրակացությունը մեկօրյա ժամկետում ուղարկում է ծառայողական քննության կողմերին և արտաքին գործերի նախարարին:

2. Դիվանագետն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը կարող է բողոքարկել այն ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ բողոքի մեկ օրինակը ներկայացնելով նախարարին:

3. Արտաքին գործերի նախարարը, եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների հիման վրա ընդունում է դիվանագետին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու վերաբերյալ որոշում: Որոշումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է դիվանագետին և էթիկայի հանձնաժողովին:

~~**Հոդված 37. Էթիկայի հանձնաժողովը**~~

~~1. Դիվանագիտական ծառայության ընթացքում դիվանագիտական ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտումը, անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և իրավիճակային շահերի բախման դեպքերը ուսումնասիրելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում ստեղծվում է էթիկայի հանձնաժողով:~~

~~2. Էթիկայի հանձնաժողովը քննում և լուծում է դիվանագետի վարքագծի կանոնների խախտումների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ~~

~~դիմումները և դրանց առնչությամբ առաջարկություններ ներկայացնում իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին:~~

~~3. Դիվանագետի վարքագծի կանոնները, էթիկայի հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:~~

~~***(37-րդ հոդվածը լրաց. 11.12.23 ՀՕ-405-Ն)***~~

~~***(11.12.23 ՀՕ-405-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***~~

Գ Լ ՈՒ Խ 8

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված ~~38~~41. Դիվանագետների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները

1. Ծառայողական պարտականությունները, հատուկ առաջադրանքները լավագույնս կատարելու, երկարամյա ծառայության, անբասիր աշխատանքի, ծառայության մեջ ունեցած նվաճումների համար դիվանագետի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) արտաքին գործերի նախարարության հուշամեդալով, մեդալով պարգևատրում.

4) հուշանվերով պարգևատրում.

5) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

6) կարգապահական տույժի հանում.

7) օրենքով սահմանված խրախուսանքի այլ միջոցներ:

2. Խրախուսանքի միջոցները կիրառում է ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարը:

3. Օտարերկրյա պետությունների~~ներ~~ում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ կարող է կիրառել ~~ում է~~ սույն հոդվածում~~ի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում~~ նշված խրախուսանքի միջոցները:

4. Արտաքին գործերի նախարարության հուշամեդալով, մեդալով պարգևատրման կարգը սահմանվում է ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարի հրամանով:

Հոդված ~~39~~42. Դիվանագետների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու, կարգապահական կանոնները, վարքագծի կանոնները (բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները կամ շահերի բախման ~~Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու, աշխատանքային կարգապահության կանոնները և դիվանագետի էթիկայի~~ կանոնները խախտելու դեպքում դիվանագետի նկատմամբ կարող ~~են~~է կիրառվել հետևյալ կարգապահական տույժեր~~ը~~ից որևէ մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) ծառայության դադարեցում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառվում է բացառապես անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում:

~~2~~3. Կարգապահական տույժերը կիրառում է ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարը:

~~3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը կարգապահական տույժերը կիրառում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի համաձայնությամբ:~~

~~4~~. Մինչև կարգապահական տույժ ~~նշանակ~~կիրառելը կարգապահական խախտում թույլ տված անձից պահանջվում է գրավոր բացատրություն:

5. Կարգապահական տույժը չի կիրառվում, եթե կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից անցել է երեք ամիս, իսկ կարգապահական խախտում կատարելու օրվանից՝ վեց ամիս:

6. Կարգապահական տույժ կիրառելու մասին անձին ~~հաղորդվում~~ տեղեկացվում է կարգապահական տույժ կիրառելուց հետո՝ ~~եռօրյա ժամկետում~~3 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

8. Եթե կարգապահական տույժ ~~նշանակ~~կիրառելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժ չի կիրառվել, ապա անձը համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

~~**Հոդված 40. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերը**~~

~~1. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերն են.~~

~~1) անձնական դիմումը.~~

~~2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.~~

~~3) քաղաքական, վարչական, ինքնավար կամ հայեցողական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.~~

~~4) դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը.~~

~~5) սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.~~

~~6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը (բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդի).~~

~~7) ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությամբ տառապելը.~~

~~8) հաստիքների կրճատումը և (կամ) դիվանագիտական ծառայության մարմնի լուծարումը.~~

~~9) ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին մրցութային ատեստավորող հանձնաժողովի որոշումը.~~

~~10) դիվանագետի վարքագծի կանոնները խախտելը.~~

~~11) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները խախտելը.~~

~~12) ազատազրկման դատապարտելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը.~~

~~13) անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը.~~

~~14) դատական կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.~~

~~15) դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը.~~

~~16) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.~~

~~17) օրենքով սահմանված այլ հիմքերով:~~

~~2. Դիվանագետի պարտականությունները դադարում են նրա մահվան դեպքում:~~

~~3. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, բացառությամբ 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտոնի:~~

Հոդված 43. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման և ծառայության դադարման հիմքերը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատման հիմքերն են.

1) անձնական դիմումը.

2) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը.

3) հաստիքների կրճատումը.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը (բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդի).

5) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

6) մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացությունը՝ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին-.

7) սույն օրենքի 42~~0~~-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատում է արտաքին գործերի նախարարը:

3. Դիվանագիտական ծառայության դադարման հիմքերն են.

1) դիվանագետի մահը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը.

3) ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությամբ տառապելը.

4) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելը.

5) ազատազրկման դատապարտելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը.

6) անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը.

7) դատական կարգով դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը.

8) դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը:

4. Դիվանագիտական ծառայությունը դադարեցվում է արտաքին գործերի նախարարի հրամանով:

~~**Հոդված 41. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը**~~

~~1. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարման առավելագույն տարիքը 65 տարին է:~~

~~2. Դիվանագիտական ծառայության պաշտոնում պաշտոնավարության առավելագույն տարիքը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով դիվանագետը կարող է մինչև երեք տարի ժամկետով շարունակել պաշտոնավարել:~~

-

Գ Լ ՈՒ Խ 9

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4~~2~~4. Դիվանագետի իրավունքները

1. Դիվանագետի իրավունքներն են՝

1) «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված իրավունքները.

2) իր ~~լիազորությունների~~ իրավասությունների շրջանակ~~ներ~~ում որոշումներ ընդունելը՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով անմիջական ղեկավարի հետ, և հարցերի քննարկումներին մասնակցելը.

3) աշխատանքի, աշխատավարձի, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններով ապահովվածությունը.

4) սոցիալական ապահովությունը.

5) սահմանված կարգով դիվանագիտական աստիճանի բարձրացումը.

6) վերապատրաստումը, եթե չի իրականացվում մրցույթային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա.

7) ~~մրցույթի և~~ ատեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.

8) դիվանագիտական ծառայության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Հոդված 4~~3~~5. Դիվանագետի պարտականությունները

1. Դիվանագետի պարտականություններն են՝

1) «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված պարտականությունները.

2) մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները մշտապես կատարելագործելը.

3) իր իրավասությունների շրջանակում մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելը.

4) իր ~~լիազորի~~իրավասությունների շրջանակ~~ներ~~ում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելն ու օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալը.

5) պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում.

6) դիվանագետի ~~վարքագծի~~էթիկայի և կարգապահական կանոնները պահպանելը:~~.~~

~~7) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նվերներ ընդունելու սահմանափակումները պահպանելը:~~

~~(43-րդ հոդվածը լրաց. 07.12.22 ՀՕ-550-Ն, փոփ. 01.03.23 ՀՕ-59-Ն)~~

Հոդված 4~~2.1~~6. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը

1. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը վարելու կարգը սահմանվում է ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարի~~ը~~ հրամանով:

~~*(42.1-ին հոդվածը լրաց. 11.12.23 ՀՕ-405-Ն)*~~

~~*(11.12.23 ՀՕ-405-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 447. Դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները

1. Դիվանագետն իրավունք չունի՝

1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) խախտելու քաղաքական զսպվածության սկզբունքը՝ զբաղվելու կուսակցական գործունեությամբ կամ իր ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցներն օգտագործելու կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.

4) խախտելու «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները, պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ հրաժարվելու գաղտնիքին առնչվելու թույլտվության ձևակերպման սահմանված ընթացակարգն անցնելու~~ը~~ց:~~.~~

~~5) ստանալու հոնորար իր ծառայողական պարտականությունների կատարումից բխող՝ իր նախապատրաստած հրապարակումների կամ ելույթների համար.~~

~~6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու դիվանագիտական ծառայության մարմնի նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքն ու ծառայողական տեղեկատվությունը.~~

~~7) *(կետն ուժը կորցրել է 07.12.22 ՀՕ-550-Ն)*~~

~~8) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից:~~

2. Դիվանագետին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր,

ինչպես նաև ամուսնու ~~ծնող, վերջինիս զավակ,~~ եղբայր~~, և~~ քույր, ծնող և զավակ) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

3. ~~Դիվանագիտական ծառայության~~ Դիվանագետը պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ~~դիվանագետը~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման:

4. ~~Դիվանագիտական ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող սույն հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետում նշված աշխատանքի հանդեպ:~~Դիվանագետն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտներ:

~~5. Դիվանագետն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտներ:~~

~~***(44-րդ հոդվածը փոփ. 07.12.22 ՀՕ-550-Ն, 01.03.23 ՀՕ-59-Ն)***~~

Հոդված 4~~5~~8. Դիվանագետ~~ներ~~ի սոցիալական երաշխիքները

1. Պետությունը դիվանագետի~~հական ծառայողի~~ համար երաշխավորում է՝

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և առողջության համար անվնաս ~~և անհրաժեշտ~~ աշխատանքային պայմաններ.

2) վարձատրություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.

3) ամենամյա վճարովի արձակուրդ.

~~3~~4) օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայելու ընթացքում բժշկական ապահովագրություն, ներառյալ՝ ~~նրա~~իր ընտանիքի անդամների համար, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին՝ ըստ բժշկական ապահովագրության պայմանագրերի.

~~4) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը, ինչպես նաև երեք ամիսը չգերազանցող ժամկետով վերապատրաստման դեպքում՝ աշխատավարձը.~~

~~5~~5) ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած հաշմանդամության դեպքում ~~նրան~~դիվանագետին, իսկ զոհվելու դեպքում՝ ~~նրա~~իր ընտանիքի անդամներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստներով ապահովում՝ պատճառված վնասի միաժամանակյա փոխհատուցմամբ.

~~6~~6) կենսաթոշակի անցնելիս, կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու հիմքով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի համաձայն դիվանագիտական աստիճանի համար տրվող հավելավճարի պահպանում՝ ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության սահմանած կարգով.

~~9~~7).

~~7)~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ~~նրա~~ դիվանագետի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված՝ ~~նրա~~իր և ~~նրա~~իր ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովումը բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.

~~8~~8) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցումը.

~~9~~9) օրենքով սահմանված այլ սոցիալական երաշխիքներ:~~.~~

Հոդված 4~~9~~6. Դիվանագետի վարձատրությունը և դիվանագիտական ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցումը

1. Դիվանագետ~~ների~~ի վարձատրության հետ կապված հարաբերությունները և առանձնահատկությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով:

2. Օտարերկրյա պետությունում ~~գործող~~ դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին աշխատավարձից բացի, վճարվում է ամսական փոխհատուցում օտարերկրյա պետությունում ծառայության հետ կապված ծախսերի

համար՝ ~~համաձայն~~ըստ տվյալ երկրի կենսամակարդակի հիման վրա հաշվարկված գործակցի՝ Կառավարության սահմանած չափով:

~~3. Նույն դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետ ամուսինների ծառայության դեպքում ավելի ցածր պաշտոն զբաղեցնող ամուսինն ստանում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փոխհատուցումը՝ 50 տոկոսի չափով:~~

~~4~~3. Օտարերկրյա պետությունում ~~գործող~~ դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին վճարվում է փոխհատուցում նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված փոխհատուցման 10 տոկոսի չափով:

~~5~~4. Դիվանագետի ամուսնու համար սույն հոդվածի ~~4~~3-րդ մասում նշված փոխհատուցումը չի վճարվում, եթե նա օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ~~, սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն,~~ զբաղեցնում է դիվանագիտական ծառայության պաշտոն կամ եթե սույն օրենքի ~~47~~50-րդ հոդվածի ~~3~~4-րդ մասի համաձայն անցնում է աշխատանքի դեսպանընկալ պետությունում:

~~6~~5. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի հետ բնակվող իր երեխաների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսման ծախսերը հոգալու նպատակով դիվանագետին վճարվում է փոխհատուցում՝ Կառավարության սահմանած կարգով և չափով, մինչև ~~երեխայի~~նրանց 18 տարին լրանալը:

~~7~~6. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետին ~~տրամադրվում է~~տրվում է նրա դիվանագիտական աստիճանին, զբաղեցրած պաշտոնին և ընտանիքի անդամների թվին համապատասխան բնակարանի համար փոխհատուցում՝ Կառավարության սահմանած չափով:

~~8~~7. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմ~~ին~~ում ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու և օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերը, ներառյալ՝ անձնական օգտագործման ուղեբեռի և տրանսպորտային միջոցի տեղափոխման ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8~~9~~. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարին և նրա ընտանիքի

անդամներին՝ ծառայության յուրաքանչյուր տարվա ընթացքում մեկ անգամ, իսկ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայություն անցնող դիվանագետին և նրա ընտանիքի անդամներին ծառայության ամբողջ ընթացքում մեկ անգամ վճարվում է Հայաստանի Հանրապետությունում արձակուրդն անցկացնելու համար ճանապարհածախսը:

~~10. Սույն հոդվածի իմաստով օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը և մինչև 18 տարեկան երեխաները:~~

Հոդված ~~47~~50. Օտարերկրյա ~~պետությունպետությունում~~ դիվանագիտական ծառայության մեկնած դիվանագետի ամուսնու իրավունքները

1. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնող դիվանագետի հետ կարող են մեկնել դիվանագետի ընտանիքի անդամները:

2. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնող դիվանագետ ամուսնու հետ մեկնելիս՝ պետական մարմնում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող դիվանագետի ամուսինը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին ներկայացնում է դիմում՝ իր դիվանագետ ամուսնու հետ օտարերկրյա պետություն մեկնելու մասին: Օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակահատվածում դիվանագետի ամուսնու՝ պետական մարմնում զբաղեցրած համապատասխան պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր:

~~1~~3. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնած դիվանագետի ամուսինն օտարերկրյա պետությունից վերադառնալուց հետո պետական ~~հիմնարկներում~~մարմնում վերականգնվում է (նշանակվում է) իր զբաղեցրած պաշտոնում, ~~կամ այլ հավասարազոր պաշտոնում~~ իսկ անհնարինության դեպքում՝ այլ հավասարազոր պաշտոնում՝ ~~մինչև օտարերկրյա պետություն մեկնելն ստացած աշխատավարձից ոչ պակաս աշխատավարձով, եթե օրենքով այլ բան սահմանված չէ~~: Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին մեկնած ամուսնու հետ օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակահատվածը դիվանագետի ամուսնու աշխատանքային ստաժում հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

~~2. Օտարերկրյա պետությունում գործող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնած~~

~~ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:~~

~~3~~4. Դիվանագետի ամուսինը կարող է աշխատել դեսպանընկալ պետությունում, որտեղ ծառայում է նրա ամուսինը, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ թույլատրվում է տվյալ երկրի օրենսդրությամբ՝ նախապես տեղեկացնելով ~~Հայաստանի Հանրապետության~~ արտաքին գործերի նախարարությանը:

Հոդված 51. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կենսաթոշակի ապահովումը

1. Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կենսաթոշակի ապահովումը և կենսաթոշակ նշանակելու պայմանները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող դրամական օգնությունը և վճարումները, ծառայության ստաժի հաշվարկման կարգը, ինչպես նաև սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով:

Գ Լ ՈՒ Խ 10

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Հոդված ~~48~~52. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը (այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր) դիվանագետի և սույն օրենքով դիվանագիտական անձնագիր կրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը ~~և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը~~ հավաստող կենսաչափական տվյալներ պարունակող փաստաթուղթ է, որը նախատեսված է

օտարերկրյա պետություններում պաշտոնական կամ դիվանագիտական առաքելություն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը (այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվող՝ անձը հաստատող փաստաթուղթ է, որը հաստատում է, որ դրա կրողը դիվանագետ կամ, սույն օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, այն կրելու իրավունքն ունեցող անձ է: Դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

1. 3. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հիման վրա՝ առավելագույնը հինգ տարի վավերականության ժամկետով:

(48-րդ հոդվածը լրաց. 15.06.22 ՀՕ-256-Ն)
(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 49 53. Դիվանագիտական անձնագիր կրելու իրավունք ունեցող անձինք

1. Հայաստանի Հանրապետության դ Դիվանագիտական անձնագիր տրվում է՝

1) Հանրապետության նախագահին, վարչապետին, Ազգային ժողովի նախագահին, Սահմանադրական դատարանի նախագահին, Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և նրանց ընտանիքների անդամներին.

2) Հանրապետության պաշտոնաթող նախագահին.

3) Ամենայն հայոց կաթողիկոսին. 3) 2018 թվականից հետո պաշտոնաթող վարչապետին.

4) Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորներին.

5) Կկառավարության անդամներին, Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարին, Ազգային ժողովի պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի անդամներին, Ազգային ժողովի պատգամավորներին, Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների ղեկավարներին, իսկ կոլեգիալ մարմինների դեպքում՝ դրանց նախագահներին, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի

նախագահին, ~~Հայաստանի Հանրապետության~~ գլխավոր դատախազին, ~~Հայաստանի Հանրապետության~~ կենտրոնական բանկի նախագահին, ~~Հայաստանի Հանրապետության~~ մարզպետներին, Երևանի քաղաքապետին.

6) ~~արտաքին գործերի նախարարությունում և դրան ենթակա մարմնում պաշտոն զբաղեցնող անձանց՝ ծառայողական գործուղումների նպատակով~~ դիվանագետին, դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարին.

7) դիվանագետի, դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի հետ օտարերկրյա պետություն դիվանագիտական ծառայության մարմին մեկնելիս նրանց ամուսիններին և մինչև 21 տարեկան չամուսնացած զավակներին.

8) արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում պաշտոն զբաղեցնող անձանց՝ գործուղվելու նպատակով.

~~7~~9) ~~օտարերկրյա պետություն դիվանագիտական ծառայության մեկնած դիվանագիտական ներկայացուցիչներին, դիվանագետներին,~~ սույն օրենքի 10-րդ հոդվածում~~ի 5-6-րդ մասերում~~ նշված կցորդներին, ներկայացուցիչներին, ~~և ներկայացուցչության համապատասխան աշխատակիցներին,~~ ինչպես նաև նրանց ~~ընտանիքների անդամներին՝~~ ամուսիններին~~ուն~~ և մինչև 21 տարեկան չամուսնացած ~~և խնամքի տակ գտնվող~~ զավակներին՝~~,~~ նրանց հետ օտարերկրյա պետություն մեկնելիս.

10) սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված անձանց.

11) Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կառույցներում նշանակված կամ ներկայացված այն պաշտոնատար անձանց և աշխատակիցներին, որոնց տրվում են դիվանագիտական կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին հավասարեցված արտոնություններ, ինչպես նաև նրանց ամուսիններին և մինչև 21 տարեկան չամուսնացած զավակներին՝ նրանց հետ օտարերկրյա պետություն մեկնելիս:

2. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված անձանց դիվանագիտական անձնագիր տրվում է վարչապետի թույլտվությամբ:

~~**Հոդված 50. Դիվանագիտական անձնագրի տրամադրման, մերժման և անվավեր ճանաչելու կարգը**~~

~~***(վերնագիրը խմբ. 15.06.22 ՀՕ-256-Ն)***~~

~~1. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հիման վրա՝ առավելագույնը հինգ~~

~~տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավելի, քան «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետները:~~

~~2. Դիվանագիտական անձնագրի տրամադրումը մերժվում է, եթե՝~~

~~1) դիմումատուն ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթղթեր.~~

~~2) դիմումատուն չի ներկայացրել օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան կազմված փաստաթղթեր.~~

~~3) դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, բացառությամբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ անձին դիվանագիտական անձնագրի տրամադրման դեպքի:~~

~~3. Պաշտոնավարության ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, համապատասխան պաշտոնատար անձինք իրենց դիվանագիտական անձնագրերը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:~~

~~Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության ավարտից հետո Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, վերադարձած դիվանագետների ընտանիքի անդամներն իրենց դիվանագիտական անձնագրերն ի պահ են հանձնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:~~

~~4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան՝ չհանձնված, ինչպես նաև կորած, կեղծված կամ օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ճանաչում է անվավեր:~~

~~5. Դիվանագիտական անձնագիրը տրամադրելու, հաշվառելու, տրամադրումը մերժելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:~~

~~(50-րդ հոդվածը խմբ.15.06.22 ՀՕ-256-Ն)~~

~~(15.06.22 ~~ՀՕ-256-Ն~~ օրենքն ունի անցումային դրույթ)~~

Գ Լ ՈՒ Խ 11

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 5~~1~~4. Դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորումը

1. Դիվանագիտական ծառայության մարմինները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

2. Օտարերկրյա պետությունում ~~Հայաստանի Հանրապետության~~ դիվանագիտական ծառայության մարմինները պետական բյուջեի միջոցներից բացի, կարող են ֆինանսավորվել նաև այլ աղբյուրներից՝ Կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 12

~~ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ~~

~~Հոդված 52. Դիվանագիտական դպրոցը~~

~~1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը (այսուհետ՝ Դիվանագիտական դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող իրավաբանական անձ է:~~

~~2. Դիվանագիտական դպրոցի կառուցվածքը և գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:~~

~~2.1. Դիվանագիտական դպրոցում ուսանելու ժամանակահատվածը դիվանագիտական դպրոցի շրջանավարտի՝ դիվանագիտական ծառայության պաշտոնի ըստ կարգի նշանակվելու դեպքում ներառվում է դիվանագիտական ծառայության ստաժում:~~

~~3. Դիվանագիտական դպրոցը, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝~~

~~1) դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը.~~

~~2) դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անձանց պատրաստումը.~~

~~3) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:~~

~~4. Դիվանագիտական դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:~~

~~5. Դպրոցի տնօրենի պաշտոնում դիվանագետի նշանակման դեպքում այդ պաշտոնում աշխատելու ժամկետը ներառվում է դիվանագիտական ծառայության~~

~~ստաժում, և նրա վրա տարածվում են սույն օրենքով դիվանագետի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:~~

~~*(52-րդ հոդվածը լրաց.15.06.22 ՀՕ-256-Ն)*~~

~~*(15.06.22 ՀՕ-256-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Հոդված 55. Դիվանագիտական ակադեմիա

1. Դիվանագիտական ակադեմիան պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Դիվանագիտական ակադեմիայի կառուցվածքը և գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, ակադեմիայի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. Դիվանագիտական ակադեմիան, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստումը.

2) դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անձանց պատրաստումը.

3) գիտական, վերլուծական ուսումնասիրությունների իրականացնումը.

4) վերլուծական կենտրոնների հետ փոխգործակցությունը.

5) արտաքին քաղաքականության հիմնահարցերի շուրջ միջոցառումների (քննարկման հարթակների, համաժողովների, սեմինարների) կազմակերպումը.

6) արտաքին քաղաքականության հիմնահարցերի թեմաներով ուսումնական ծրագրերի մշակումը.

7)~~այլ~~ ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը.

8) միջազգային և տարածաշրջանային գործընթացների զարգացման հեռանկարների շուրջ քննարկումների կազմակերպումը, առաջարկությունների ներկայացումը:

9) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

3. Դիվանագիտական ակադեմիան իր գործունեության և նպատակների իրականացման համար կարող է իրականացնել կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեություն:

4. Դիվանագիտական ակադեմիան ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5. Ակադեմիայի տնօրենի պաշտոնում դիվանագետի նշանակման դեպքում այդ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը հաշվարկվում է դիվանագիտական ծառայության ստաժում, և նրա վրա տարածվում են սույն օրենքով դիվանագետի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1346-27.04.2026-ԱՀ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1346[1]-27.04.2026-ԱՀ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1346[2]-27.04.2026-ԱՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասեր, 49-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ.մասեր:	Առաջարկում ենք հանել «գործող» բառերը, հիմք ընդունելով օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 10-րդ մաս	Առաջարկում ենք հանել 2-րդ նախադասությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մաս	Առաջարկում ենք «կադրերի ռեզերվում՝» բառերից հետո ավելացնել «դիվանագիտական ծառայության կադրերի ռեզերվում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկում ենք «ազատվելու» բառը փոխարինել «ազատման» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.		«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 50-րդ հոդվածի 3-րդ մաս	Առաջարկում ենք «պետական մարմնում» բառերը ավելացնել «վերադառնալուց հետո» բառից հետո, իսկ «վերականգնվում է (նշանակվում է) բառերից հետո հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.		«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 33-րդ հոդվածի 4-րդ մաս:	Առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արտաքին գործերի նախարարությունից կամ ենթակա մարմնից Հանրապետության նախագահի աշխատակազմ, Ազգային ժողովի աշխատակազմ, վարչապետի աշխատակազմ և պետական կառավարման համակարգի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մարմիններ, ինչպես նաև Հանրապետության նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովի աշխատակազմից, վարչապետի աշխատակազմից և պետական կառավարման համակարգի, բացառիկ դեպքերում պետական անվտանգության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու անվտանգության պաշտպանության նպատակով այլ մարմիններից արտաքին գործերի նախարարության համակարգ գործուղման կարգը սահմանում է Կառավարությունը:»:		
7.		«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 37-րդ	Առաջարկում ենք «մրցույթ անցկացնելու, ատեստավորում անցկացնելու» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդվածի 1-ին մաս:	փոխարինել «մրցույթ և ատեստավորում անցկացնելու» բառերը		
8.		«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ մաս	Առաջարկում ենք «մինչև» բառից հետո ավելացնել «տվյալ» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.		«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթ	Առաջարկում ենք անցումային դրույթով սահմանել, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրացած և դիվանագիտական ծառայության պաշտոնում մինչև երեք տարի ժամկետով պաշտոնավորող դիվանագետները շարունակում են պաշտոնավարել անժամկետ: Միևնույն ժամանակ, սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը ուժը կորցրած ճանաչել 2026 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			««Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (Կ-1304[5]-03.04.2026-ԱՍ-011):»: Սահմանել նաև, որ օրենքի 52-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթերի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:		
10.		«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված:	Առաջարկում ենք ավելացնել «հանել» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է: